ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Անկայունության և կոնֆլիկտների պայմաններում սոցիալական պաշտպանության համակարգերի կառուցում և պաշտպանություն՝ մարդասիրություն-զարգացում-խաղաղություն կապի միջոցով» խորագրով ֆորումին մասնակցության արդյունքների վերաբերյալ

1. **Անունը, ազգանունը.**
   Եվգինե Վարդանյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**
   ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության խորհրդական, կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Իտալիայի Հանրապետություն (Հռոմ), 2024 թվականի հոկտեմբերի 15-17-ը

4. **Հրավիրող կողմը.**
   Ֆորումը կազմակերպվել էր ՄԱԿ-ի Պարենային համաշխարհային ծրագրի, ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության և այլ գործընկեր կազմակերպությունների կողմից:

5. **Գործուղման նպատակը.**
   Մասնակցություն «Անկայունության և կոնֆլիկտների պայմաններում սոցիալական պաշտպանության համակարգերի կառուցում և պաշտպանություն՝ մարդասիրություն-զարգացում-խաղաղություն կապի միջոցով» խորագրով ֆորումին:

6. **Քննարկված թեմաները.**
   Ֆորումի նպատակն էր միջազգային կազմակերպությունների, դոնոր հանրույթի և կառավարությունների հրավիրյալ ներկայացուցիչների հետ քննարկել կոնֆլիկտային և ճգնաժամային իրավիճակներում հումանիտար, սոցիալական պաշտպանության և զարգացման ծրագրերի կազմակերպման ու իրականացման խնդիրները, դրանց լուծման եղանակները և հեռանկարում սպասվող հիմնական նախաձեռնությունները:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Ֆորումի ընթացքում քննարկումներին մասնակցելիս՝ ներկայացրել եմ ՀՀ կառավարության փորձը ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց սոցիալական աջակցության կազմակերպման և տրամադրման գործում, նկարագրել եմ իրականացված և իրականացվող սոցիալական աջակցության ծրագրերը՝ դրամական աջակցությունից սկսած, մինչև բնակարանային ապահովություն և զբաղվածության ծրագրեր, մանրամասնել եմ այդ ծրագրերի իրականացման ընթացքում միջազգային կազմակերպությունների, դոնոր հանրույթի, ինչպես նաև տեղական հասարակական կազմակերպությունների հետ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համագործակցության մեխանիզմները և ընթացակարգերը, նախարարության կողմից սոցիալական աջակցության տարաբնույթ ծրագրերի համակարգման գործընթացները և այդ ուղղությամբ իրականացվող աշխատանքները:

Որպես ֆորումի հիմնական արդյունք կարող եմ նշել այն, որ.

1. ֆորումին մասնակցող միջազգային կազմակերպությունների, դոնոր հանրույթի և հրավիրյալ երկրների կառավարությունների ներկայացուցիչներն իրազեկվել են ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց սոցիալական աջակցության ոլորտում ՀՀ կառավարության իրականացրած աշխատանքների, հիմնական ծրագրերի, առանցքային մոտեցումների վերաբերյալ.
2. տեղեկացվել են ՀՀ սոցիալական աջակցության ոլորտում իրականացվող հիմնական բարեփոխումների, այդ թվում՝ ընտանիքների անապահովության գնահատման նոր համակարգի ներդրման, ինչպես նաև սոցիալական շտապօգնության համակարգի զարգացման մասին:

Բացի այդ, միջազգային կազմակերպությունների և դոնոր հանրույթի ներկայացուցիչները հաստատել են իրենց հանձնառությունը Հայաստանում սոցիալական ոլորտի ծրագրերը շարունակելու, սպասվող ծրագրերն ու աշխատանքները համագործակցաբար և միասնական մոտեցմամբ իրականացնելու վերաբերյալ:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Ֆորումի ընթացքում ձեռք են բերվել նաև համաձայնություններ Հայաստանում ավելի մանրամասն քննարկումներ ունենալու վերաբերյալ:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Հնարավորինս ինտենսիվացնել միջազգային գործընկերների, դոնոր հանրույթի հետ քննարկումները, համագործակցությունը՝ ներդնելով և շարունակաբար զարգացնելով լիազոր մարմնի կողմից՝ սոցիալական ոլորտում իրականացվող ծրագրերի ու նախաձեռնությունների **համակարգման** մեխանիզմները:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

29. 10. 2024 թ.